Նշենք, որ հայերու կողքին ծովերու վրայ առեւտուրը, տակաւին մինչեւ այդ ժամանակ, մինչեւ եւրոպացիներու ամբողջումը հնդկական եւ արեւելեան շուկաներուն վրայ, արարներու ձեռքն էր. արարները հմուտ ծովախոյզներ էին եւ Հնդկաց ովկիանոսը ճեղքելով՝ Սուրբաթայի, Ճաւայի, Ֆիլիպինեան կղզիներուն եւ Չինաստանի հետ առեւտուր կը կատարէին. արար այդ առեւտրականներուն միջոցով էր, որ իսլամութիւնը մուսուլմաններու հետ Մալայա, Սուրբաթ եւ Ճաւայ:


Անգլիացիք, որոնք Բարեյուսոյ հրուանդանէն կ'ուղղուէին Հնդկաստան, աշխատեցան սիրաշահիլ Սուրբաթի հայերը, որովհետեւ առանց անոնց չէին կրնար թափանցել հնդկական շուկաներ եւ մանաւանդ երկրին խորերը, որովհետեւ միայն հայերը ծանօթ էին երկրի ճանապարհներուն, բարքերուն եւ տարբեր լեզուներ ու առանձնայատկութիւններուն իշխող դասակարգը նախապատուութիւնը հայերուն կու տային: Անգլիացիք նկատեցին, որ հայերուն վրայ գերակշռութիւն հաստատելու միակ միջոցը իրենց նաւերն են:

## ՀԱՅ ՄԵԾ ԱՌԵՏԻՐԱԿԱՆՆԵՐ ՍՈՒՐԱԹԻ ՄԷՁ

1660ական տարիներէն սկսեալ Սուրբաթի հայամէնէն երեւելի վաճառականներէն դարձան բնիկ նոր ջուղայեցի երկու եղբայրներ՝ խոճա կիրակոս եւ խոճա Աւետիք: Անոնք գործակցեցան անգլիական Արեւելեան հնդկական ընկերութեան հետ եւ անոր նաւերով Սուրբաթի եւ Պարսկաստանի միջեւ առեւտուրի ձեռնարկեցին: Ժամանակ մը ետք անոնք իրենց առեւտրական գործառնութիւնները ընդարձակեցին դէպի Եւրոպա, յատկապէս՝ Հոլանտա:

Նոյն ժամանակաշրջանին Սուրբաթի գլխաւոր առեւտրականներէն էին խոճա Մինաս, Աղա Մաթեւոսեան, Գրիգոր Աղամալեան, Խաչիկ Աւետիքեան, Մելքոն Տիւլախեան եւ Սարուկ ու Միքայէլ Մինասեաններ: Անոնցմէ խոճա Մինաս Սուրբաթի հայութեան ղեկավարը դարձաւ, իսկ յետոյ, 1670ական տարիներուն, անգլիացիներուն հրաւերով կարգ մը հայ ընտանիքներու հետ Պոմպէյ փոխադրուեցաւ:

Սուրբաթի հայ գաղութը այսպէսով արագօրէն բարգաւաճեցաւ, եւ հայերը փայլուն դիրքերու տիրացան: Հոն կեդրոնացած հայ առեւտրականները, լաւ ծանօթ ըլլալով երկրին եւ անոր ժողովուրդին, իրենք անձնապէս եւ իրենց գործակաւորներուն միջոցով, ներքին գաւառները շրջելով, տեղացիներէն կը գնէին բամպակ, մետաքս, համեմներ, շաքար եւ այլն, եւ գնուած ապրանքը կ'արահանեցնէին Սուրբաթ:



Ընդիկ գիւղացիները եղբերով հացահատիկ աղալու աշխատանքի ընթացքին:

րաթ փոխադրելով՝ կամ անգլիացի ու եւրոպացի այլ վաճառականներու կը ծախէին, կամ ալ իրենք նաւերով կ'արտահանէին:

## ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀՆԴԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԽՈՃԱ ՓԱՆՈՍ ԲԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՒ

Անգլիական Արեւելեան հնդկական ընկերութիւնը (հիմնուած՝ 1600ին), որ անգլիացի առեւտրականներու ընկերութիւն էր եւ Հնդկաստանի անգլիական տիրոջները կառավարող մարմին, այս ժամանակ, ժ.Թ. դարու կէսին ետք արդէն բաւական ամրապնդած էր իր գերիշխանութիւնը Հնդկաստանի մէջ եւ անգլիական կառավարութեանն իրաւասութիւն ստացած էր տեղական քաղաքական, ռազմական, տնտեսական, առեւտրական բոլոր գործերը ինքնիշխան կերպով տնօրինելու, պատերազմ յայտարարելու, հաշտութիւն կնքելու, բանակ եւ նաւատորմ պահելու եւ այլ արտօնութիւններ: Ընկերութիւնը ունէր առեւտրական աւաններ ու յենակէտեր եւ



Ագրայի Թաճ Սահալը

գլխաւորաբար բամպակէ ու մետաքսէ գործուածքներու, մետաքսի հումքի, համեմներու, ափսոսի, շաքարի ու բորակի արտահանումով կը զբաղէր:

Սուրբաթի հայ առեւտրականներուն մէջէն այս ժամանակ ամէնէն աւելի նշանաւոր դարձաւ բնիկ նոր ջուղայեցի խոճա Փանոս Քալանթար, որ Սուրբաթի հայութեան եւ առեւտրականներուն ներկայացուցիչը դարձաւ Արեւելեան հնդկական ընկերութեան մօտ:

28 Յունիս 1688ին Արեւելեան հնդկական ընկերութիւնը խոճա Փանոս Քալանթարի հետ գոյացուց համաձայնութիւն մը, ուր կ'ըսուէր.

«Ա.- Հայ ազգը այժմ եւ յառաջիկային ունենայ հաւասար իրաւունքներ, զորս ունին կամ պիտի չնորհուին ընկերութեանն ունենալու կամ անգլիացի վաճառականի:

«Բ.- Անոնք բացարձակ ազատութիւն ունին երթեկեկելու Հնդկաստանէն այլուր եւ ուրիշ երկիրներէ Հնդկաստան, ընկերութեան որեւէ նաւով, նպատակաւորաբար անձնագիրով:

«Գ.- Ազատ են բնակիլ ընկերութեան որեւէ մէկ քաղաքի, աւանի, կայանի մէջ, առնել, տալ, գնել կալուածներ եւ տուներ, քաղաքային պաշտօններ եւ աստիճաններ ստանալ: Ունին միշտ բացարձակ եւ անվրդով ազատութիւն՝ պաշտելու իրենց կրօնը: Կը յայտնենք, որ պիտի չպահուի մեր ծառայութեան մէջ այն կուսակալը, որ որեւէ կերպով կը նեղէ զանոնք կամ կը խանգարէ ներկայիս շնորհուած որեւէ արտօնութիւն:

«Դ.- Ազատ են նաւարկելու ընկերութեան որեւէ կայանէն Հնդկաստանի նաւահանգիստներ, Հարաւային ծով, Չինաստան եւ Մանիլա՝ ընկերութեան նաւերով, եւ առեւտուր ընել, Չինաստանի եւ Մանիլայի հետ կամ ընկերութեան պայմանագրին սահմաններուն մէջ գտնուած ուրիշ նաւահանգիստներու եւ վայրերու հետ, անգլիացիներուն հետ հաւասար պայմաններով, մաքսով եւ նաւորչէքով»:

Համաձայնագրին մէջ յիշուած է նաեւ, որ հայ վաճառականներու ձեռքերուն մէջ կեդրոնացած արծաթի, աղամանդի, բուստի, ծիրանի ներկի, սնդիկի, սուրի շեղբերու, հրացանի, երկաթի, հայելիի, յախճապակիի, մորթի, վենետիկեան անօթներու, ասուի, կապարի, ըմպելիներու, մարգարտի, յակիւթի, չինական եւ պենկալական ապրանքներու, մուշկի եւ ալըր-չուժի առեւտուրը նաւորչէքի եւ մաքսի ենթակայ են:

Անգլիացիներուն նպատակն էր այսպէսով ամբողջ հայ վաճառականութիւնը իրենց ազդեցութեան տակ առնել եւ տարբեր երկրներու հետ հայ վաճառականներու կատարած առեւտուրը Անգլիոյ ճամբով կատարել տալ: Իբրեւ երաշխիք՝ ընկերութիւնը ազատութիւն կու տար հայերուն Անգլիա ուղղուող որեւէ նաւ բեռնելու հնդկական որեւէ տեսակ ապրանքով: Ընկերութիւնը յանձնարուեցաւ կը ստանձնէր պահել բոլոր ապրանքները, որոնք կը յանձնուէին իրեն, մինչեւ որ անգլիական առաջատանաւերով այդ ապրանքները փոխադրուէին Թուրքիա, Վենետիկ եւ այլուր:

Ընկերութիւնը կը խոստանար նաեւ, որ հնդկական որեւէ քաղաքի կամ աւանի մէջ, ուր քառասունէ աւելի հայեր կը բնակին, իր ծախսով եկեղեցի կառուցելու եւ քահանային կամ պաշտօնեային թոշակը հոգալ:

Այս համաձայնագրին հիմամբ Սուրբաթ եւ այլուր կեդրոնացած հայ առեւտրականները անգլիացիներուն գործակիցները դարձան: Թէեւ, ըստ երեւոյթի, հայերուն մեծ առանձնաշնորհումներ կ'ընծայուէին, սակայն գործնականօրէն համաձայնագիրը աւելի յաջողութիւն մըն էր անգլիացիներուն համար:

**ԾԱՆՈՒՑՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ**

«Ազդակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակելի փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիծը ընթացիկ գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազդակ»ի ծանուցումներու գրասենեակը:

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ազգային իշխանության Ոստանակաճարի հարկերի տնօրենության համար դիմումներ կ'ընդունվեն, նուազագույն հետեւեալ պայմաններն մեկը լրացնող համալսարանաւարտ թեկնածուներն, որոնք տիրացած են.

- 1- «Կրթական Կարիք»ի Սպախարոս տիտղոսին (M. A. in School Administration) եւ ունին ուսուցչական փորձառութիւն:
- 2- Համալսարանական «Պսակաւոր Գիտութեանց կամ Արուեստից» տիտղոսին (B. S. / B. A. in Computer Science or Business) եւ ունին 5 տարուան ուսուցչական փորձառութիւն:

Դիմումները կ'ընդունուին Ազգ. Առաջնորդարարի մէջ:

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

### ՍԱԿԱՐԱՆ

Պէտրոյի սակարանին մէջ օտար դրամացիներու փակման սակագիները հետեւեալներն էին երէկ.

Մուրիական թղթուկի	31,40 - 33,50	լ.ն.
Իրաքեան տիւնար	50,00 - 51,00	լ.ն.
Քուէլթեան տիւնար	4953,41 - 4957,42	լ.ն.
Յորդանանեան տիւնար	2124,41 - 2128,42	լ.ն.
Պահրէյնեան տիւնար	3995,00 - 4000,00	լ.ն.
Ա. Մ. Ընդունութեանց տիրաւ	408,41 - 412,42	լ.ն.
Քարթաբեան տիւնար	412,16 - 416,15	լ.ն.
Մէլուտական տիւնար	399,88 - 403,99	լ.ն.
Օմանեան տիւնար	3900,00 - 3930,00	լ.ն.
Եգիպտական կիւնէ	321,71 - 325,72	լ.ն.
Անգլիական սթրէյթին	2288,65 - 2292,11	լ.ն.
Չուիցերիական ֆրանք	1009,25 - 1013,52	լ.ն.
Թրքական լիրա	3,61 - 3,64	լ.ն.
Կիպրական փաւունտ	2559,10 - 2563,17	լ.ն.
Ճափոնական հապար եէն	12,67 - 12,71	լ.ն.
Ափրիկեան հապար ֆրանք	2450 - 2451	լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1514,00	լ.ն.
Քանադական տոլար	956,50 - 959,85	լ.ն.
Աւստրալիական տոլար	809,95 - 813,70	լ.ն.
Եւրօ	1459,90 - 1462,16	լ.ն.

● **ՈՍԿԻ**

Անգլիական մէկ ոսկի	115,000 - 125,000	լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	108,500 - 118,500	լ.ն.
Օմանեան մէկ ոսկի	95,500 - 105,500	լ.ն.
Մեքսիքական փէստո	569,500 - 589,500	լ.ն.
Մէկ քիլոկրամ		
ձոյլ ոսկի	15,000,000 - 15,500,000	լ.ն.
Մէկ օնս ոսկի	311,68 - 315,72	Տ
Մէկ օնս արծաթ	4,59 - 4,63	Տ

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.

Եւրօ	0.9786
Քանադական տոլար	1.5755
Չուիցերիական ֆրանք	1.4953
Ճափոնական եէն	118.9
Մէկ սթրէյթին	1.531

● **ՍՈՒԿՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ**

Գիճի Ա. ճշդում	Գիճի Բ. ճշդում	
Ա. կարգի	43/8	4 3/8
Բ. կարգի	4 4/8	4 6/8

բաժնեթուղթ

### ԽԱՉԲԱՆ ԹԻՒ 5221

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱՋԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

- | ՆՈՐԻՋՈՆԱԿԱՆ   | ՈՒՂԱՆԱՅԵԱՅ   |
|---|--|
| 1. Չայնային կամ ալիքային երեւէջներ արձանագրող կազմած: | 1. Շատ տաք - Փետրիսի քոյրը՝ Հարսիսի նկատմամբ:                    |
| 2. Բնեզր - ձգմել, մանրել:                             | 2. Գաղթող թռչուն - Մեծ մայր:                                     |
| 3. Պարտեսակ - կարծր ու թափանցիկ նիւթ:                 | 3. Արական անուն - Մանողակ:                                       |
| 4. Տուտ - Արամազդի գուտարերէն - Տնկելի ճիւղ:          | 4. Շինուածք - Չեռնհաս:   |
| 5. Հեքիաթային տիպար մը:                               | 5. Ծանրութեան միաւոր - Շնիադող:                                  |
| 6. Կանացի օտար շաքարաթերթ - կորզել, յափշտակել:        | 6. Ածականակերտ մասնիկ - Ստուեր:                                  |
| 7. Ընտիր սեւ մուշտակ:                                 | 7. Յանկադրում - Արական օտար անուն:                               |
| 8. Չգտում, թեքում:                                    | 8. Երկվարկեան - Նոյն գիրերը - Քարի տափակ շերտ:                   |
| 9. Բնութեան կազմիչ ուժեր - կայսերական հրովարտակ:      | 9. Շին ֆէյնի գինուորական թելը - Յոյն դիցուհի:                    |
| 10. Ընկերութեան մաս - Դարիճենիի համեմաւոր կեղեւ:      | 10. Խորհրդային վատհամբաւ կազմակերպութեան մը - Իական բայ - Աքացի: |
| 11. Լեցուն - կնիւն - Իրերայաջողոր տառեր:              | 11. Անգլիոյ քաղաքներէն - Համահաւասար:                            |

### ԹԻՒ 5220

### ԽԱՉԲԱՆ

### ԼՈՒԾՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
2	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
3	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
4	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
5	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
6	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
7	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
8	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
9	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
10	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
11	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս

### ՊԱՆՔ ՕԹՈՄԱՆ՝ ՊԱՅՔԱՐԻ ԵՒ...

Շարունակուած՝ 5րդ էջէն

ան խոստացած էր իր անձով երաշխաւորել անոնց ապահովութիւնը. կը հասնին ծովեզերք, ուրկէ գիրենք կը փոխադրեն Ֆրանսական «Ժիրոնտ» շոգենաւը:

Դժբախտաբար, սակայն, շոգենաւին վրայ գինաթափ կ'ընեն հայերը ու զանոնք կը փոխադրեն Մարսէյի բանտը: Իրենց խոստումը չեն յարգեր նաեւ դեսպանները, որովհետեւ անոնք իրենց սեփական շահերը միայն կը հետապնդէին: Այս բոլորէն ետք, սակայն, Պանք Օթոմանի գրաւումը մարտական իմաստով մեծ յոյսեր ներշնչեց Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, զորացուց պալքարի ու զոհարեցութեան ոգին՝ հայրենիքի սիրոյն համար: Քաղաքական իմաստով հայութիւնը մեծ չափով օգտուեցաւ այս դէպքէն, որովհետեւ ան զօրացուց միայն սեփական ուժերուն վտանգելու վճռականութիւնը: անիկա հայութեան սորվեցուց, թէ «օտարէն մեզի ֆայտ չկայ», ինչպէս կ'ըսուի Կիկոյի մօր երգին մէջ:

Իր օրերուն դէպքը շատ մեծ արձագանգ գտաւ եւրոպական մամուլին մէջ, որովհետեւ կարելի չէր, որ հայ յեղափոխականներ յանդուրժանէին սուլթանին քիթին տակ գրաւել երկրին ամէնէն կարեւոր դրամատուները: Եւրոպական կարգ մը թերթեր նոյնիսկ «դարուն ամէնէն ցնցիչ դէպքը» անուանեցին այս գործողութիւնը: Այս ձեւով եւրոպական պետութիւնները կը ստիպուէին հաշուի առնել հայ յեղափոխութիւնը՝ իբրեւ կարեւոր ուժ Դատի լուծման մէջ:

### «ԱԶԳԱԿ»Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄՐՅԱՆՔ

#### ՀԱՐՑՈՒՄ ԹԻՒ 21

«Ի՞նչ կը կոչուի Շրատ էք կատարած առաջին անջրպետագնացը: Ե՞րբ էք կատարած է ան կարծիր մոլորակին վրայ: (2 միշ)

Աճուց : .....

Մակամուց : .....

Հասցէ : .....

Հեռ. : .....

Ծանօթ.՝ Պատասխանները կտրօմները «Ազգակ»ի խմբագրութեան փոխանցել մրցանքի բոլոր հարցումներուն ներկայացումն ենք:

### ☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

☆ **ԽՈՅ** (21 Մարտէն 20 Ապրիլ)

Մեծ գումարի մը հաշուեցոյցը ձեզ պիտի տրամեցնէ այսօր. պիտի զգաք, որ չէք կարողացած առաջը առնել այս ոչ կարեւոր ծախսին:

☆ **ՅՈՒՆ** (21 Մարտէն 21 Մայիս)

Ձեր գործընկերոջ կամ կողակիցին հետ դրամական հաշիւներու մասին բնաւ մի խօսիք, որովհետեւ պիտի չկարենաք գլուխ ելլել օրուան ծախսերուն հետ:

☆ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսէն 21 Յունիս)

Ձեզի նախանձողներ ունիք, հետեւաբար ձեր մասին շատ խօսողներ կ'ըլլան: Կարեւորութիւն մի տաք ու ըսեք՝ «Աւելի լաւ է, որ մէկը ցանկայ թե՛ գրան խղճայ»:

☆ **ԽԵՑԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս)

Ձեր գաւակներուն հետ կամ շրջանակի մէջ ձեր ունեցած վեճերը յաճախ մտահոգիչ կը դառնան: Ուշադիր եղէք, որ անիմաստ հարցերու համար մթնոլորտը չբոկանա:

☆ **ԱՌԻՒՄ** (24 Յուլիսէն 23 Օգոստոս)

Տուեցէ դուրս ելլելէ առաջ ուշադիր եղէք, որ ելեկտրական բոլոր գործիքները լաւ վիճակի մէջ են, որպէսզի արկած մը չպատահի: Նախագուշտութիւնը վտանգը կը հեռացնէ: Չգուշ եղէք:

☆ **ԿՈՅ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)

Ձափաւորեցէք ձեր առաջարկները, մանաւանդ անձի մը նկատմամբ, որ կը գտնուի դժուար պայմաններու մէջ: Ոեւէ մէկուն վիրաւորական խօսք մի՛ ըսէք:

☆ **ԿՇԻՌՔ** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)

Եթէ համաձայնագիր մը պիտի ստորագրէք, առաւելագոյն չափով ուշադիր եղէք: Եթէ կրնաք, յետագոցեք եւ նոր պայմանագրով մը առաջարկեցէք:

☆ **ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)

Ձեզի հանդէպ համակրանք ունեցող անձերու անկեղծ զգացումներուն նկատմամբ աւելորդ հարցումներ կ'ուղղէք: Այսպիսի տրամադրութիւն մէկ կողմ դրէք եւ կասկածամիտ մի՛ ըլլաք:

☆ **ԱՂԵՂՆԱՌՈՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)

Գիշերային խնձոյցներ եւ խեղճութիւններ ընելը մէկ կողմ դրէք, որպէսզի ձեր առողջութեան չվնասէք: Մէկ-երկու օր հանգիստի տրամադրեցէք:

☆ **ԱՅԾԵՂԶԻՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)

Ձեր համարակից պաւելինի բարեկամի մը կը սխալիք, որովհետեւ անոր մտնեցողով աւելի թեթեւ ու հանգիստ պիտի գտաք: Կասկածամիտ մի՛ ըլլաք:

☆ **ՄՈՎԱՆՈՅՇ** (21 Յունուարէն 19 Փետրուար)

Ձեր սպարեզին մէջ կրնաք ունենալ անակնկալ հարց մը, գոր չէիք սպասէք: Այս արգելքները պիտի կարենաք յարաբարել յառաջիկայ շաբաթներուն:

☆ **ՁՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ)

Նիւթական պակասի պատճառով պիտի չկարենաք ձեր երագած մեծ ճամբորդութիւնը կատարել: Համբերեցէք. հարցը հիւանդագին վիճակի մի՛ վերածեք:

# ՕՐԱՏԵՏՐ

## ՓՈՒՍՏՈՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ / ԶԲՈՍԱԵՐՉՈՒԹԻՒՆ

### ՆԻՒ ԵՈՐՔԻ ԴԵՉԻ ԱՐՔԱՆ՝ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԵՉ

Արդէն շաբաթ մը ի վեր ձեզ երաժշտութեան աշխարհառօշակ դաշնակահարներէն Էնտրի Հիլ կը փոթորկէ Պէյրութի գիշերները: Անոր ելոյթները կը շարունակուին մինչեւ 17 Օգոստոս, «Պլու Նոթ Քաֆէ»ի մէջ:

Պատանի տարիքէն դանակով ձեզ երաժշտութեան աշխարհը մուտք գործած Էնտրի Հիլ իր երկար ասպարէզին ընթացքին նուազակցած է Մայիս Տէյվիսի եւ Թելուիլըս Մոնթիսի մեծ երաժիշտներու: Իսկ «Պլու Նոթ Քաֆէ»-ի մէջ «Պլու Նոթ Քաֆէ»-ի մէջ 1986ին պայն նկատած է իր ամենամեծ պաշտպանեալը:

Առանց տեղացի նուագողներու խումբի մը ընկերակցութեան եւ առանձին նուագող Էնտրի Հիլ Լիբանանի մէջ իր ելոյթներուն կը արտահայտուի իր յայտնաբերած յայտագիրը: Ան հակամէտ է տեղւոյն վրայ ձեւաւորելու իր յայտնաբերած յայտագիրը: Ան հակամէտ է տեղւոյն վրայ ձեւաւորելու իր յայտնաբերած յայտագիրը: Ան հակամէտ է տեղւոյն վրայ ձեւաւորելու իր յայտնաբերած յայտագիրը:



Էնտրի Հիլ՝ «Պլու Նոթ Քաֆէ»ի մէջ

Կեւ տեսնել, թէ կարծիքներ ինչպէ՛ս կ'ընթանայ իմ եւ ունկնդիրներու միջեւ: Նախ կ'ուզեմ հասկնայ թէ ելոյթին ներկաները ի՞նչ տեսակ մարդիկ են:



Նիւ Եորքի ձեզի հսկայ պարպապէս թոյլ կու տայ, որ պատմութիւնը իր մէջէն անցնի դաշնակին եւ ապա՝ շորջիներուն: Նուագելու ընթացքին ան ամբողջովին կը տարուի եւ կ'ընթանայ իր երեւակայութեան հոսանքով: Միայն մասնակ, ան չի կորսնցներ իր ունկնդիրներուն հետ կապը եւ յաճախ երաժշտութեամբ կը հակադէմանան արտայայտութիւններուն:

Էնտրի Հիլի ամենավերջին գործը՝ «Էպիտոֆիֆոյ տէ», վեց-էակի համար պատրաստած երգերու խումբ մըն է: Անոնք

### ՀԵՌԱՏԵՍԻԼ

<p>Թ. Է. Լ.</p> <p>10:00 - Սապահօ</p> <p>12:30 - Միւլիթ</p> <p>13:00 - Մարուլ հանա</p> <p>14:00 - Եւրոպայի</p> <p>14:30 - Լուրեր</p> <p>15:00 - Մըշուար</p> <p>17:30 - Ֆիլմաշար</p> <p>18:30 - Կենդ. գովակար</p> <p>19:30 - Արաք. լուրեր</p> <p>21:30 - Տեղակալ</p> <p>22:30 - Տեղակալ</p> <p>23:00 - Ամերիկեան</p> <p>ԷՄ. Թ. Վ. Բ.</p> <p>6:30 - Լուրեր</p> <p>7:30 - Թելե</p> <p>09:30 - Բիլիս</p> <p>10:30 - Քի էք</p> <p>11:00 - Ուս թրնսս</p> <p>11:30 - Քըլ մէյլէ ալլէ</p> <p>12:00 - Էմ. Թ. Վ. Բ.</p> <p>12:30 - Էս. Էլ. Շի.</p> <p>13:00 - Մեքսիքական</p> <p>14:00 - Տուրիսմ</p> <p>14:45 - Սի. Էն. Էն. Ի</p> <p>15:15 - Աղանի աղանի</p> <p>16:30 - Փոքեմոն</p> <p>17:00 - Միլի սթիտո</p> <p>17:30 - @Էմ. Թ. Վ. Բ.</p> <p>18:45 - Էնամորտա</p> <p>20:00 - Արաքերէն</p> <p>20:30 - Պէսք սելըր</p> <p>22:30 - Տիվերիսիւրման</p> <p>ԷԼ. Պ. Ս. Բ.</p> <p>7:00 - Սի. Էն. Էն. Ի</p> <p>7:30 - Ինսայտ</p> <p>08:30 - Մա իլար իլար</p> <p>09:00 - Թայպին էլ թոպ</p> <p>10:00 - Տարապէթ</p> <p>10:30 - Նահարքում</p> <p>13:50 - Մարեյիս</p> <p>15:00 - Լուրեր</p> <p>15:15 - Ընթոս ուս անս</p> <p>16:15 - Չաուայա</p> <p>17:00 - Կենդանի</p> <p>18:00 - Տիվերիսիւրման</p> <p>19:00 - Մարիա Իպպէլ</p> <p>20:00 - Արաքերէն</p> <p>20:30 - Արաքական</p> <p>21:30 - Երգահանդէս՝ «Սթիլի էք Պապպէթ»</p> <p>ՄՈՒՍՈՒՄՈՒՄ</p> <p>7:00 - Լուրեր</p> <p>8:30 - Այամ</p> <p>այ սապահ</p> <p>13:00 - Յիէ ինֆօ</p> <p>13:05 - Ամերիկեան</p> <p>ֆիլմաշար՝ «Նոթք լէստիկ»</p> <p>14:00 - Անգլերէն լուրեր</p>	<p>14:20 - Ֆրանսերէն լուրեր</p> <p>14:40 - Հայերէն լուրեր</p> <p>15:05 - Լուրեր</p> <p>15:30 - Արաքերէն</p> <p>ֆիլմաշար</p> <p>16:30 - Թելեթրապի</p> <p>17:00 - Ըլդար ըրպար</p> <p>17:30 - Արաքական</p> <p>ֆիլմաշար</p> <p>18:30 - Այ. Ճախ</p> <p>19:30 - Մոնտիալի յատուկ յայտագիր</p> <p>20:00 - Արաքերէն լուրեր</p> <p>20:30 - Թուսուի</p> <p>մուսիսարիս</p> <p>20:35 - Շու պատու երիւր</p> <p>21:30 - Արաքական</p> <p>ֆիլմաշար</p> <p>22:30 - Քրայմ սիւն</p> <p>իւվերիկէլլըրնայ</p> <p>23:30 - Էսփաս Ֆրանսերէն</p> <p>ԷՆ. Պ. Է. Բ.</p> <p>13:00 - Վաւերա-գրական</p> <p>14:30 - Թաքիթ</p> <p>այ Էսուի</p> <p>15:00 - Լուրեր</p> <p>16:00 - Պիթաճարրոտ</p> <p>17:30 - Մինեմա/35 mm</p> <p>18:00 - Նո քուէնթ</p> <p>18:15 - Տեղական</p> <p>յայտագիր</p> <p>19:00 - Լուրեր</p> <p>20:00 - Քուրուկ</p> <p>20:30 - Մոնթրապար</p> <p>մուֆիտ</p> <p>22:00 - Մասայա</p> <p>23:00 - Մոնտիալի յատուկ յայտագիր</p> <p>ՆԻՒ Թ. Վ. Բ.</p> <p>7:30 - Լուրեր</p> <p>8:30 - Երգ</p> <p>09:00 - Սապահ էլ ուարտ</p> <p>12:30 - Նորաձեւութիւն</p> <p>13:00 - Տեղական</p> <p>ֆիլմաշար</p> <p>14:00 - Լուրեր</p> <p>15:00 - Վաւերագրական</p> <p>16:00 - Տեղական</p> <p>յայտագիր</p> <p>17:30 - Չուիս ին</p> <p>19:00 - Մարիա Նուր</p> <p>19:30 - Լուրեր</p> <p>20:30 - Մէն Թոքի</p> <p>21:30 - Եգիպտական</p> <p>22:30 - Էլրիպատի յալպ</p> <p>Թէյմոնտ</p> <p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱՏԵՍԻՒՆ</p> <p>ՀԵՌԱՏԵՍԻՒՆ</p> <p>09:00 - Հեռուստատեսութիւն «Միտոյ կախարհանք»</p> <p>09:45 - Կեն գիշերային</p> <p>10:40 - Բարի ախորժակ</p> <p>11:00 - Հայտարար</p> <p>11:20 - Թուսիթո</p>
---	---

# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն ԱՇԽԱՐՀ



ՓԻՆԿ ՓՈՆԿ

## ԱՅՍՈՐ

### ԱՄՄԱՆԻ ՄԵՋ ԿԸ ՍԿՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ 18ԲԴ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ

Այսօր՝ Զորքաշարթի, Ամմանի մէջ (Յորդանան) կը սկսի փինկ փոնկի արարական ազգային խումբերու 18րդ ախոյեանութեան մրցաշարքը, որուն իրենց մասնակցութիւնը կը բերեն Լիբանանի տղոց եւ աղջկանց ազգային խումբերը: Աղջկանց ախոյեանութեան մրցումներուն իրենց մասնակցութիւնը կը բերեն 8 երկիրներու ազգային խումբերը, իսկ տղոց մրցաշարքին՝ 13 երկիրներու:

Լիբանանի աղջկանց ազգային խումբին մաս կը կազմեն Հ. Մ. Լ. Մ. Ի մարզիկներէն՝ Լիզա Պարիթեան եւ Լարա Քէչէպաշեան, իսկ տղոց խումբին՝ Ալֆրէտ-Նաթան Սարգիսեան:

Աղջկանց մրցումներուն տիտղոսին տիրանալու համար պայքարը բաւական սուր պիտի ըլլայ երեք թեկնածուներու՝ Եգիպտոսի, Յորդանանի եւ Լիբանանի միջեւ, իսկ տղոց պարագային՝ Եգիպտոսի, Քաթարի եւ Արաբական Միացեալ Էմիրութիւններուն միջեւ:

## ՅՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲ

### ԺԱՔ ԱՆՆԹԻՆԻԻ ՆՈՐ ԿԱԶՍԸ

Յրանսայի ֆուտպոլի ազգային խումբին նոր մարզիչը՝ Ժաք Սանթինի, որ փոխարինեց Ռոմէ Լըմէրը, յայտարարեց իր 22 մարզիկներուն անունները, որոնք Օգոստոս 21ին բարեկամական մրցումը պիտի կատարեն Թունուի դէմ, այս վերջինին դաշտին վրայ:

Խումբին մաս կը կազմեն չորս նորեկ մարզիկներ, որոնք կրնան բախուր ունենալ առաջին անգամ կրելու ազգային խումբին շապիկը, անշուշտ եթէ Սանթինի դաշտներ կապուցնէ Կանոնը մրցումին ընթացքին: Այդ չորսն են. Ետուսպահներ՝ Ֆիլիպ Մէքս (Օքսէն), Անթոնի Ռեվէյէր (Ռէնն), միջնապահ՝ Պրիւս Շէյրու (Լիվըրպոլ) եւ յարձակող՝ Սիտնի Կոլու (Լիոն):

Անոնց կարգին թեւեւ նկատի առնուցան Էրիք Քարիէր, Ժերմէնի Պրեշէ (Լիոն) եւ Սթիւ Մարլէ (Ֆուլհէմ), սակայն կը գտնուին ետք այլ մարզիկներ, որոնք 2002ի Մոնտիալին մաս չէին կազմած ազգային խումբին:

Իր կատարած առաջին մամուլի ատլիսիսին ընթացքին, իբրեւ ազգային խումբի մարզիչ, Սանթինի յայտարարեց, թէ իր առաջնահերթ նպատակն է իր խումբին հետ լաւ արդիւնք արձանագրել Եւրո-2004ի ֆուտպոլի մրցաշարքի վտոււմի մրցումներուն եւ իբրեւ տիտղոսակիր ոչ մէկ ճիգ խնայել տիտղոսը պահելու համար:

Սանթինի շատ հաւանաբար յառաջիկային իր տրամադրութեան տակ չկարենայ ունենայլ յետսպահ Ֆրանսը Լըպօֆը եւ յառաջապահներ Եու-

րի ճորքայէֆը եւ Քրիսթֆ Տիւկարին, որոնք բոլորն ալ յայտարարեցին, թէ կը մտադրեն լքել միջազգային ասպարէզը:

Անոնց ալ մաս կը կազմեն Սանթինի ըստ, թէ անոնց հետ կը մտադրէ առանձին հանդիպում ունենալ:

Ան յատուկ հանդիպում մըն ալ պիտի ունենայ Նիքոլա Անելքայի հետ: Նշեմք, թէ անցեալ եղանակի վերջին քանի մը ամիսը Լիվըրպոլի փոխտրուած Անելքայի մաս կը կազմէ Մանչեսթըր Սիթիի:

2002ի Մոնտիալին բացակայած Արսենալի յառաջապահ Ռոպերտ Փիրէս դարձեալ հեռու պիտի ըլլայ ազգային խումբէն՝ վիրաւոր ըլլալուն պատճառով: Ան շատ հաւանաբար իր փորձերուն վերսկսի առնուապէս երկու ամիս ետք:

Ստորեւ՝ Ժաք Սանթինիի կողմէ նկատի առնուած 22 մարզիկները:

Բ Ե Ր Դ Ա Պ Ա Ն Ե Ր . - Կ ր ե կ ո Ր ի Քուլիէ (Լիոն) եւ Ուլրիշ Ռամէ (Պարիս):

Յ Ե Տ Ս Ա Պ Ա Ն Ե Ր . - Ժերմէնի Պրեշէ (Լիոն), Վ Ե Ն Ս Ա Ն Ք ան տ էլ ա (Ա. Էս. Ռոմա), Ֆիլիպ Քրիսթանուվալ (Պարիս), Մարսել Տրսայի (Չելսի), Ֆիլիպ Մէքս




Ժաք Սանթինի

(Օքսէն), Անթոնի Ռեվէյէր (Ռէնն), Ուիլի Սանիոլ (Պայէրս Միւնիխ), Միքայել Սիլվեսթր (Մանչեսթըր Եունայթըտ) եւ Լիլիան Թիւրամ (Եուվեթսու):

Մ Ի Ջ Ն Ա Պ Ա Ն Ե Ր . - Էրիք Քարիէր (Լիոն), Պրիւս Շէյրու (Լիվըրպոլ), Բլու Մաքելէյ (Ռէալ Մատրիտ), Էմանուէլ Փըթի (Չելսի), Փաթրիք Վիլյուա (Արսենալ) եւ Զինէտին Զիտան (Ռէալ Մատրիտ):

Յ Ա Ռ Ա Ջ Ա Պ Ա Ն Ե Ր . - Ժիպրիլ Սիսէ (Օքսէն), Սիտնի Կոլու (Լիոն), Թիէրի Հանրի (Արսենալ), Սթիւ Մարլէ (Ֆուլհէմ) եւ Սիլվէն Վիլթորտ (Արսենալ):



Թիէրի Լամերի

## ՖՈՒԹՊՈՒԼԻ «ԵՐԿՉՈՏ» ՓՈԽԱՆՅՈՒՄՆԵՐ

● ԱՒՏՐԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ մարզիկ Փոլ Օքոն ազատ փոխանցուածով մը Միտլըզպորդէն միացաւ Լիմի, բժշկական քննութիւններու ենթարկուելէ ետք:

30 տարեկան Օքոն, որ երեք տարուան պայմանագրուածութիւն մը ստորագրեց իր նոր աշխատանքին հետ, ֆուտպոլիստի իր ասպարէզին ընթացքին երրորդ անգամ ըլլալով իրեն մարզիչ պիտի ունենայ Թերի Վենըպըլը: Առաջին անգամ Վենըպըլը Օքոնի մարզիչը եղած էր Աւստրալիոյ ֆուտպոլի ազգային խումբին մէջ, իսկ երկրորդին՝ Միտլըզպորդի մէջ:

Լացիո Ռոմայի եւ Ֆիորենթինայի նախկին մարզիկ Օքոն յայտնուածով կը դառնայ վեցերորդ աւստրալիացին, որ մաս կը կազմէ Անգլիոյ բարձրագոյն դասակարգի խումբերուն: Այդ հինգն են. Չէրի Բիւրը, Մարք Վիտուբա, Եագոպ Պրոնց, Տէնի Միլոսեւիչ եւ ձէյմի Մաքմասթըր:

● ԻՏԱԼԱՅԻ միջազգա-

յին յետսպահ Ֆապիո Քանաւարո իր կազմը՝ Փարման լքելով միացաւ Ինթեր Միլանի, չորս տարուան պայմանագրութիւն մը ստորագրելով անոր հետ:

25 տարեկան մարզիկին փոխանցման գումարին մասին պաշտօնապէս ոչինչ յայտարարուեցաւ, սակայն ըստ իտալական

«Կազեթա Տելլո Սփոր» օրաթերթին, Ինթեր Փարմայի վճարեց 15 միլիոն տոլար:

Ինթերի միանալով, Քանաւարո ըսաւ, թէ շատ ուրախ է այս փոխանցումով, որովհետեւ ազգային խումբին իր խմբակիցներէն շատերը մաս կը կազմեն իր նոր աշխատանքին:

**ԸՆՏԱՆԻՔԻ ԲՈՒՈՐ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ԱՌՈՂՁՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆ**  
**SHOWER CABINE CENTER**  
Ձեր լոգանքի վարագոյրները Bac a Douche et Bainoire փոխարինեցէ շարժական ալիւմինիում եւ փլասթիք կազմածներով, որոնք հիմնուած են բժշկականօրէն ընդունուած միջազգային չափանիշներու վրայ՝ ապահովելով մորթային եւ ալիւմինիումի մաքրմանը: Այլազան չափեր, մատչելի գին, տեղադրելը՝ արագ, եւ երաշխաւորուած աշխատանք:  
Դիմել՝ ԹԱԴԵՍ ԷԼԱՅԵԱՆ հաստ. Սրտ էլ Պառլորի, Զամու Շամուն պողոտայ: Հեռ. 03-392088 եւ 03-476018:

## ԹՈՆԻ ԷՏԸՍԶ ԼՔԵՑ ՖՈՒԹՊՈՒԼԸ՝ ՌԻՍՄԱՆ ՀԱՄԱՐ



Թոնի Էտսեպ՝ իր կատարած վերջին մրցումին

Անգլիոյ ֆուտպոլի ազգային խումբին եւ Արսենալի նախկին խմբագետն ու յետսպահ՝ Թոնի Էտսեպ վերջ մը դրաւ ֆուտպոլի 20 տարուան իր ասպարէզին, երբ անցեալ շաբաթավերջին «Օպթըմը» թերթին հետ իր կատարած հարցազրոյցին ընթացքին յայտնեց, թէ պիտի լքէ ֆուտպոլը՝ շարունակելու համար իր ուսումը:

Էտսեպ, որ ընտանեան իր ակումբին հետ տիրացած է 10 տիտղոսներու, որոշած է այլեւս չորգնեցնել ինքզինքը, այլ վերադառնալ «դպրոց» եւ իր ուսումը շարունակել:

Ցուաջիկայ ամիս 35 տարեկան վեթեռանք պիտի սկսի 3 տարուան տեւողութեամբ հետեւել «Մարգարական գիտութիւն» ճիւղին: Ան կը մտադրէ նշեալ ճիւղը աւարտելէ ետք անցնիլ Յրանսա եւ հոն յաւելեալ ուսում ստանալով Ֆիզիկոս կողմէ մարզիչի արտօնագիր ձեռք ձգել:

Այս մէկուն անդրադառնալով Էտսեպ ըսաւ. «Շատ սրտանց աշխատեցայ 20 տարուան ֆուտպոլի ասպարէզին ընթացքին եւ հիմա ժամանակն է միեւնոյն թափով սկսելու նոր կեանք մը: Երբ պատանի էի, ուսումնէն աւելի ֆուտպոլով հետաքրքրուած էի, սակայն հիմա կը զգամ ուսումի անհրաժեշտութիւնը: Կը կարծեմ, որ տարիներ շարունակ ֆիզիքականին վստահելէ ետք կ'արժէ քանի մը տարի մտային գետնի վրայ զարգանալ»:

Էտսեպ, որ 5 մարզիչի պաշտօն ստանձնելու առաջարկ ստացած էր, ըսաւ. «Չեմ կարծեր, որ պատրաստ եմ կամ ընդունիլ արժանի եմ մարզիչի պաշտօն մը ստանձնելու ներկայիս: Այդ հինգ առաջարկներուն կարգին եղաւ Ուալթֆորտի սքանչելի առաջարկը, սակայն կը կարծեմ, որ ճիշդ քայլը առի գանտնք մերժելով: Տակաւին ժամանակ կայ այդ մասին մտածելու, սակայն ներկայիս ինձի համար կարեւորը ուսումն է»:

Էտսեպ, որ ոգելից ըմպելիներ գործածած ըլլալուն պատճառով 4 ամիս բանտարկուած էր (1990ին) եւ ներկայիս կը փորձէ ձեռքարդարել այդ հիւանդութենէն, պիտի շարունակէ տնօրինել այն բարեփոխական հաստատութիւնը, որ ինք հիմնած էր, օգնելու համար այն մարզիկներուն, որոնք մոլի եղած են տարբեր նիւթերու, ինչպէս՝ խթանիչ դեղեր, ոգելից ըմպելիներ, եւ այլն: Ան նաեւ ընդունած է ՄԱԿԻ մշակութային կազմակերպութեան՝ ԵՈՒՆԵՍԿՕԻ մօտ դեսպան ըլլալու պաշտօնը:

Նշեմք, թէ Էտսեպ Արսենալի հետ իր վերջին մրցումը կատարեց անցեալ Մայիսին, Սելթիք խումբին դէմ: Ան առաջին անգամ Արսենալի շապիկը կրեց 1983ին: 20 տարուան ընթացքին, ան անոր շապիկը 700 անգամ կրելով չորս անգամ շահեցաւ Անգլիոյ ախոյեանութիւնը, երեք անգամ Անգլիոյ բաժակը, երկու անգամ՝ Անգլիոյ իրկայի բաժակը, մէկ անգամ ալ՝ Եւրոպայի բաժակակիր խումբերու բաժակը:

35 տարեկան Էտսեպ, որ 86 անգամ կրած է Անգլիոյ ֆուտպոլի ազգային խումբին շապիկը, միջազգային ասպարէզը լքեց 21 Յունուար 2001ին:

## ԹԵՆԻՍ

### ՍԱՐԳՍԵԱՆԻ ՅԱՂԹԱԿԱՆ

Ինտիանափոլիսի մէջ (Մ. Ն.) տեղի ունեցող թենիսի տղոց Ար. Սի. Էյ. Ի ախոյեանութեան մրցումներուն Ա. հանգրուանին իր կատարած մրցումին, հայրենի Սարգիս Սարգսեան յաղթանակ մը արձանագրեց՝ 6-2 եւ 6-4 արդիւնքով պարտութեան մատնելով Ֆրանսացի Միքայէլ Լոտրան:

Ա. հանգրուանին յիշատակելի անակնկալ շարձանագրուեցաւ, բացի Սարք Ֆիլիփուսի (Աւստրալիա) կրած պարտութենէն՝ Յրդ դասուած գերմանացի Ռայնըր Շիւթլըրէն (7-6 եւ 7-6):

● ՄՈՆՐԻՒԼԻ մէջ (Քանաւա) տեղի ունեցող աղջկանց թենիսի միջազգային մրցաշարքին Ա. հանգրուանի մրցումներուն առաջին «գոհը» հանդիսացաւ Ֆրանսացի Մարի Փիրս, որ 7-6, 6-7 եւ 7-5 արդիւնքով պարտութիւն մը կրեց Հենրիէթա Նակիոլայէն: Աննա Բուրնիքովա (Ռուսիա) յաջողեցաւ պարտութեան մատնել Ստորի Օպաթան (Ճափոն)՝ 6-3 եւ 6-1, իսկ անոր ազգակից Էլենա Տեմենիսեւա (դասուած՝ Յրդ)՝ Ատրիանա Սերրա Չանեթիին (Իտալիա), 6-3 եւ 6-4 արդիւնքով:

## ՌՈՅ ՔԻՆ ԿՐՆԱՅ ՊԱՏԺՈՒԼ ԱՆՅԵԱԼ ԵՂԱՆԱԿԻՆ ԻՐ ԿԱՏԱՐԱԾ ՄԵԿ ՖԱՌԻԼԻՆ ՀԱՄԱՐ



Ռոյ Էլին (ձախից)՝ իր կատարած ֆուտիլին ընթացքին

Անգլիոյ ֆուտպոլի ֆետերասիոնի մէկ պատասխանատուն երէկ յայտնեց, որ Մանչեսթըր Եունայթըտի խմբագետ Ռոյ Քին կրնայ պատժուիլ անցեալ տարի Ապրիլին իր կատարած գիտումնաւոր ֆաուլին համար. ան զօրաւոր ֆաուլ մը կատարած էր Մանչեսթըր Սիթիի նորվելիացի յետսպահ Ալֆ Ինկը Հասթինսի դէմ, փորձելով երեք տարուան իր վրէժը լուծել անկէ...

1997-98 եղանակին մեծ մասը, այլրից միջազգային մարզիկ Ռոյ Քին դաշտ էր կրցած ներկայանալ, երբ ֆաուլի ենթարկուած էր Հասթինսի կողմէ, սակայն վստահաբար ոչ դիտումնաւոր կերպով:

Անցեալ տարուան այդ պատճառով դէպքն ետք, իր կարգին 29 տարեկան նորվելիացի վիրաւորուելով հազիւ քանի մը մրցում կատարած էր իր ակումբին՝ Սիթիի հետ:

Քինի կատարած այս յայտարարութեան մասին անդրադառնալով, Հասթինս ըսաւ, թէ մտադիր չէ դատ բանալու անոր դէմ, ոչ ալ հակազդելու անոր ելոյթին:

Անգլիոյ ֆուտպոլի ֆետերասիոնը եզրփակելով իր յայտարարութիւնը ըսաւ, թէ երբեք պիտի չաճապարէ վճեռու համար իր սահմանելիք պատիժը, այլ համապատասխան փաստերը ունենալէ ետք է միայն, որ հարկ եղած տնօրինումները պիտի կատարէ:

## ՌԻՕ ՖԵՐՏԻՆԱՆՏ ՎԻՐԱԽՈՐՈՒԵՑԱԻ

Անցեալ Շաբաթ օր, Մանչեսթըր Եունայթըտի «Օլտ Քրիֆթոն» դաշտին վրայ տեղի ունեցաւ ֆուտպոլի միջազգային բարեկամական մրցում մը՝ դաշտին տէրերուն եւ արժանթինեան Պոքա Ժուլիորդ խումբին միջեւ:

Թէեւ անգլիական կազմը 2 - 0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց, պարտութեան մատնելով իր հիւրը՝ Պոքան, սակայն մարզիչ Ալեքս Ֆերիլըսի կազմը տեղի ունեցած բարեփոխական այս մրցումէն ստացաւ մեծ հարուած մը, երբ իր խումբին մաս կազմող Ռիօ Ֆերտինանտ, որ աշխարհի ամէնէն տեղ յետսպահն է, վիրաւորուեցաւ: Ան շատ հաւանաբար եղանակի բացման մրցումին՝ յառաջիկայ Շաբաթ, 17 Օգոստոսին, չկարենայ դաշտ ներկայանալ Ուէսթ Պրոմուիչի դէմ:

Արժանթինեան կազմը մրցումը աւարտեց տասը մարզիկով, երբ Քարլոս Թեւէս Փոլ Սթրիչի բուռնացրով հարուած մը տուած ըլլալուն պատճառով կարմիր քարտ ստացաւ:

Շուանացի Ռուտ Վան Նիսթրըյու Ա. կիսախաղին նշանակեց անգլիական կազմին երկու կոկոր:

**BALKAN Holidays**  
**VARNA**  
**295 \$**  
Կը Երբօրէն Երբօրէն Երբօրէն  
4ը Երբօրէն Երբօրէն Երբօրէն  
4ը Երբօրէն Երբօրէն Երբօրէն  
**ՎԵՐՄԱՆ ԴԻՐՈՒԹԻՒՆ**  
Մազրաս, Ուաքք Ռում  
շէն, «Պաք Ատի»  
01-304553/63 03-273251

